ՈՒՆԵՆՔ ՄԵՆՔ ՀՈԳԻ

Մարդկային մտքի մեջ ծագող կենսական, էական գլխավոր խնդիրներից մեկը հոգու գոյությունն է:

Գոյություն ունի՞ հոգին, թե ոչ:

Ենթադրենք, որ հոգին մի երևակայություն է միայն: Այս դեպքում մարդու համար այլևս չկան կենսական խնդիրներ, ինչո՞ւ համար կորցնել մեր և մեզ լսողների ժամանակը՝ հոգևոր կյանքի, Աստուծո և հանդերձյալ կյանքի մասին խոսելու և դատելու համար: Գերադասելի կլինի այդ դեպքում, եթե մեր բոլոր ուժերը լարենք՝ հագեցնելու ներկա գոյությամբ մեզ տրված վայելքներից ու բավարարություններից, մինչև որ կանհետանանք չգոյության մեծ գիշերին մեջ:

Բոլոր ժամանակներում, երկնակամարի տակ գտնված բոլոր երկրներում մարդիկ բնազդաբար հավատացել են իրենց հոգու գոյությանը: Այս միտքը եղել է հաճախ սկզբնական, սաղմնային վիճակի մեջ, բայց մշտական և տևական, և գիտնականներն ու տաղանդավոր մարդիկ չեն քաշվել, արհամարհանք չեն զգացել իրենց ամբողջ կյանքը նվիրաբերել ի պաշտպանություն դորա: Հապա ուրեմն անհրաժեշտ են բացարձակապես անհերքելի փաստեր, որպեսզի առանց կասկածելի դատողության և քննության գտնելու հանրության կողմից ընդունված մի այդպիսի գաղափար, կանգելու հակառողի դերում մարդկության մեծամասնության դեմ:

Արդեն մի քանի տարիներ են, ֆիզիկոսները մեզ ասում են ինչ-որ մի նյութի մասին, որին այնուամենայնիվ նրանք հավատում են անպայման և անվանում են ԵԹԵՐ: Նոքա այնքան համոզված են դրա գոյությանը, որ նոցա, որոնք հերքում են այդ նյութի գյուտը, անվանում են հետամնաց, տգետ: Ցույց տալով մի շարք բնական երևույթների վրա, որոնց բացատրությունները այլ կերպ անկարելի կլինի: Նոքա ամենայն օր դիտում էին և քննում լույսը, ջերմությունը, էլեկտրականությունը ու ոչ մի տեղ չէին գտնում այդ երևույթների բացատրությունները: Երկար հետազոտություններից ու հետախուզումներից հետո նոքա եկան այն համոզման, որ այդ բոլորի պատճառը շարժողությունն է, բազմատեսակ շարժողությունը մի շատ նուրբ նյութի, որը տարածված է ամենայն տեղ՝ նույնիսկ, անթափանցիկ մարմինների ու միջմոլորակային տարածության մեջ:

Կրկնում ենք, ոչ ոք չի տեսել այդ նյութը, բայց նրա գոյությունը այնքան գեղեցիկ բացատրվում էր վաղուց կատարված հետազոտություններով: Եղած որոշումները, (սահմանումները, установление) եթերի հիպոթեզը այնքան կատարելապես համաձայնեցրել են գիտական գյուտերի հետ, որ շուտով բովանդակ գիտնական աշխարհը ընդունեց որպես ճշմարտություն՝ իրական, և վայ նրանց, որոնք թերահավատությամբ են վերաբերվում այն պատճառաբանությամբ, որ դժվարությամբ են հավատում չտեսած բանին (անտեսանելի նյութին):

Այսպես նորագույն ֆիզիկական գիտությունը յուր նորանոր գյուտերով, գիտություն, որը ունի մի օրենք՝ ընդունել այն, ինչը կարող է ստուգել ու կշռել, և հավատում է աներևույթ նյութի, ստիպված իրանից հրաժարվելու երկյուղից: Ես ոչ մի ընդդիմախոսություն չունեմ եթերի գոյության դեմ, ես գտնում եմ այդ միտքը շատ գեղեցիկ և խոնարհվում եմ գիտության որոշման առաջ: Ես միայն պահանջում եմ նույն իրավունքը՝ դեպ անհայտը հոգևոր կյանքում, ասպարեզում: Իսկապես այդ երանգի երևույթների հանդի-

պում եմ ամեն մի՝ մասնավորապես իմ կյանքում: Նոքա էապես շատ տարբերվում են նրանցից, որոնք առաջանում են իմ ֆիզիկական գործունեությունից: Ես չգիտեմ, ինչպե՞ս բացատրել, հո չեմ կարող այդ անել նյութական աշխարհը դիտելով, իրավունք չունե՞մ արդյոք իմ հերթին ստեղծել մի հիպոթեզ, մի հիպոթեզ աներևույթ ուժի, որը անվանում ենք հոգի: Համեմատությունը, որ մենք դնում ենք եթերի այս թեորիայի ու հոգևոր երևույթների միջև, ոչ այլ ինչ է, եթե ոչ, մի նմանություն, որը գուցե մի օր կլինի ոչ ուղիղ, ինչպես ներկայումս: Հավանական է, որ երբևիցե, շնորհիվ կատարելագործված գործիքների, կհաջողվի դիտել ու ապացուցել եթերի գոյությունը, բայց հոգու վերաբերությամբ նույնը լինել չի կարող, որի գոյությունը կարելի է հաստատել միմիայն ներքին աշխարհի դիտողությամբ: Հոգու հիպոթեզը ունի և այն առավելությունը, որ նա ծնունդ է առել մտածող մարդու հանդես գալու հետ միաժամանակ, մինչդեռ եթերի գաղափարը բոլորովին նոր է: Այս հիպոթեզը վերջապես ինձ բարիք է բերում, ինձ բարձրացնում է հոգով, ինչո՞ւ ուրեմն ես իրավունք չունենամ նրան համարել հիմնավոր:

Ես չեմ պահանջում ավելին, քան գիտությունը, յուրաքանչյուր անաչառ, իր անվանը արժանի գիտություն պարտավոր է տալ իմ հիպոթեզիս՝ հիշյալ իրավունքը և վերաբերվել հարգանքով դեպի իմ հոգին այն չափով, որքան ես հարգում եմ նրա եթերը:

Ես փոքր-ինչ առաջ ասացի, որ կյանքիս մեջ, ինչպես և բոլոր մարդկանց կյանքի մեջ ես նկատում եմ երկու տեսակ երևույթներ, երևույթներ, որոնք վերաբերվում են մարմնին և անվանվում են ֆիզիոլոգիական, և երևույթներ, որոնք չեն վերաբերվում մարմնին, որոնք հոգու գոյությանը թե՛ հավատացողների, թե ո՛չ հավատացողների կողմից կոչվում են հոգեբանական, հառաջինները առաջ են գալիս ֆիզիկական օրգանների հասարակ գործողություններից,—շնչառություն, արյան շրջանառություն, մարսողություն, որ հեշտությամբ կարող եմ տեսնել և ուրիշների ու իմ վրա: Բավական է օգտվել զգայարաններով՝ արտաքին դիտողությամբ, մինչդեռ հոգեբանական երևույթները ընդհակառակը՝ կարող են նկատվել ու ուսումնասիրվել միայն ներքին դիտողության շնորհիվ, այսպես կոչված՝ գիտակցության, որը նման է դեպի ներքին աշխարհը ուղղված հայացքի: Օրինակի համար, ես դեպի մեկը զգում եմ խիստ ատելություն, նա կարող է հանդես գալ արտաքին նշաններով, խոսքով կամ գործողությամբ, բայց նրա տեղը, նրա սկիզբը գտնվում է ինձանում և ոչ թե մարմնիս մեջ, այլ մի այլ բանի մեջ: Ներքին դիտողություն (наблюдение, անգլերեն կամ լատիներեն), այնքան իրական է, որ մեկը հնագույն փիլիսոփաներից՝ Դեմոկրատեսը, պաղատեց հանել իր աչքերը, որպեսզի ինքն իրեն ավելի լավ կարողանա ճանաչել (ԾԱՆԻՐ ԶՔԵԶ): Այս երկու տեսակ երևույթները կարելի է նկատել կա՛մ որպես մեկը մյուսից ծագած՝ նույնիսկ ձուլված ի մի, որ կազմում է, այսպես կոչված, ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ, կա՛մ ընդունել և պահպանել նրանց զանազանությունը՝ հավատալով հոգու գոյությանը, պատճառ երկրորդ, մարմնի շարքին հետ որպես ծագումն առաջին:

Անհավասիկ, իսկապես ի՞նչ է ասում մեզ մատերիալիզմը: Տիեզերքի մեջ այլևս ոչինչ գոյություն չունի, բացի ուժերից ու շարժման մեջ եղած նյութից: Հապա ուրեմն հոգեբանական երևույթները ևս ունեն նույն բնույթը, ինչպես և մյուսները, այսինքն բաղկացած են նույնպես ուժերից և շարժման մեջ եղած նյութից: Ուղեղը արտադրում է միտք, ինչպես և ստամոքսը՝ ստամոքսային հյութը, ոչինչ նորություն չկա, որպեսզի արտահայտենք հոգևոր երե-

պույթները մտքի, զգացմունքի, ցանկության, կամքի, բավական է միայն ուղեղային մասերի թանձրացումն, փոքր առ փոքր կրճատենք այնպես, որ ուղեղը կընդունենք որպես կենտրոն ուղեղի բոլոր արտահայտությունների գիտակցությանը: Վերջիվերջո ֆիզիոլոգի դանակի տակ կկտրվի մարդկային բոլոր գործունեությունը: Հոգին նմանվում է փրփուրի, որը գտնվում է ալիքների մկանունքի վրա, որի անհայտացումով կորչում է և փրփուրը: Այդ որոշ հարմոնիկ ակորդ է՝ երաժշտական գործիք է. կոտրում եք գործիքը, և ընդհատվում է ակորդը: Այլ կերպ ասած՝ հոգին մարմնի գործառնությունների (անգլերեն կամ լատիներեն) հետևանքներից մեկն է միայն, նա ինքը գոյություն չունի և անմիջապես անհետանում է, հենց որ դադարում են այդ գործողությունները: Ոչ ոք, անշուշտ, չի հերքում ներքին սեղմ կապը մեր առաջ բերած երկու տեսակ երևույթների: Անկասկած է, որ մարմնի հիվանդությունը իր հետ բերում է որոշ տեսակի հոգեկան թուլություն, անկարելի է մոտենալ մարմնին առանց դիպչելու հոգուն: Բոլորս գիտենք, որ բարի առողջությունը տրամադրում է ուրախություն և ընդհակառակը: Հայտնի է մեզ նույնպես, որ հասակը, սեռը, կլիման խոշոր ազդեցություն ունեն հոգեբանական երևույթների վրա, որ որևէ շշմեցնող միջոց, օրինակ՝ ալկոհոլը, ընդունված չափազանց մեծ քանակությամբ թուլացնում է ուղեղը և կարող է բոլորովին դադարեցնել հոգևոր գործունեությունը: Եթե դիպվածով վերջինի մեջ նկատվի որևէ վնասված (անգլերեն կամ ռուսերեն), միտքը կարող է թուլանալ (повреждение) և տեղի տալ խելագարության: Այս բոլորը ցույց են տալիս ամենօրյա փորձերը, բայց դոքա ցույց են տալիս և հակառակը: Հոգևոր կոչումը ազդում է ֆիզիկական՝ գոնե այն չափով, ինչ չափով վերջինը սառաջինի վրա: Մարմինը գտնվում է կախման մեջ հոգևոր ուժից, որի ազդեցության ակամա ենթակա է: Հուզմունք, վիշտ, խնդություն կարող են անմիջականորեն ազդել մարմնի վրա և ամեն մի բժշկի, թեկուզ ամենաերդվյալ մատերիալիստի շատ լավ հայտնի է դիմելը հիվանդի հոգևոր աշխարհին, որպեսզի վերջինի օրգանիզմի մեջ առաջ բերել փրկություն բերող ռեակսիոն: Մյուս կողմից հաճախ պատահում է, որ մարմինը նկատվում է թուլացած, մինչևիսկ մեռած, մինչդեռ հոգին պահպանում է բոլոր իր զգացումները: Քանի անգամ մեռնողներին վերադարձել է վերջին մոմենտը, լիակատար գիտակցություն իրենց գոյության՝ այնինչ մարմինը իրանից ներկայացրել է միմիայն մի ավիրումն: Այդպիսի ժամանակ նոքա կարողանում են արտահայտել իրենց բարձր կամքը ամենայն նրբությամբ: Հայտնի են նույնպես նյարդահարության դեպքերը, որոնք ներկայացնում են հետաքրքիր օրինակներ քնացրած մարմինների հոգեկան արտահայտությունների: Պատմում են, մի պարոն, հասակն առած, ամուրի, ընկավ նյարդահարության լիակատար դրության մեջ: Նրա մարմնի շուրջը հավաքված ժառանգորդները համարում էին նրան մեռած և խոսում էին արդեն այն հարստության մասին, որը իրանց բաժին էր ընկնելու: Հիվանդը բոլորը լսում էր, թեև ոչ մի հնարավորություն չուներ որևէ շարժում անելու, պահպանելով մտքի լիակատար պարզություն (ясность): Նա այդ ժամանակ միանգամայն գիտակցաբար որոշեց ամուսնանալ, եթե միայն կառողջանա: Փոքր ժամանակից հետո նա իսկապես ամուսնացավ և ժառանգությունը, որ այնքան ցանկացողներ կային, անցավ իր զավակներին (ուշացած պսակից ծնված):

Ես գիտեմ, կարող են բացատրել այդ երևույթը նրանով, որ տվյալ դեպքում թուլացումն առաջ է եկել ուղեղի որոշ մասերում, այդ հնարավոր է, բայց այնուամենայնիվ խո չեն կարողանում հասկանալ, ինչպես բոլորովին

կամ համարյա թե չգործող մարմինը կարող է ունենալ դեռևս այդպիսի հոգևոր կենսունակություն, եթե նա չէ ներշնչված բարձր, իր հետ համեմատած սկզբունքով, որ կոչվում է հոգի: Նույնը կարելի է ասել նաև կրկնակի տեսողության երևույթի վերաբերությամբ և ես-ի երկատման հեռազգայության: Ես կարծում եմ, որ մատերիալիստներին երբեք չի հաջողվելու բացատրել այդ երևույթները՝ առանց մարմնից անկախ հոգևոր ուժի հիպոթեզի: Այդ երկատումը (անգլերեն) կարող է մեզ տալ մի ապացույց ես-ի ամբողջության հերքման, բայց միաժամանակ ապացուցանում է, որ մարմնի հետ միասին գոյություն ունի մի այլ բարձր տեսակի էլեմենտ: Այդպիսի բազմաթիվ փաստերի քննությունը ինձ բերում է այնպիսի եզրակացության, որ մեզանից յուրաքանչյուրի մեջ կա մի դրական գործունյա սկզբունք, որը չի կարող լինել որևէ նյութի շարժման հասարակ արգասիք, որքան էլ սերտ կապված լինի նրա հետ: Այդ սկզբունքը փիլիսոփայությունը և առողջ դատողությունը անվանում է հոգի: Այդպիսով հոգին ուրեմն մի միացումն է ունակությանց, որը մենք ճանաչում ենք միայն ներքին աշխարհով: Նա մի գաղտնի ուժ է, գործունյա և շատ իրական, որը մեզ օգնում է հասկանալու շատ, ամենայն օր մեր կողմից նկատած ներքին երևույթները: Այդ հոգին է, որ տեսնում է, որ լսում է, որ սիրում է, որ տանջվում է և այլն:

Իմ աչքս առանձնապես վերցրած ընդունակություն չունի տեսնելու, ինչպես և ականջս լսելու: Աչքս ու ականջս պատուհաններ են միայն, որոնք անցկացնում են դեպի մեր ուղեղը որոշ շարժումներ, որ կոչվում են տեսողություն և լսողություն: Մյուս կողմից՝ ուղեղը ոչինչ չէր կարող զգալ, եթե նա չլիներ մի գործիք հոգեկան ես-ը կազմող՝ գործող սկզբունքի, որովհետև նա կազմված է նույն մասնիկներից, ինչպես ականջը և աչքը: Նյութը ինքնըստինքյան իներտ է (անգործունյա), չունի որևէ քմահաճություն, հապա ինչպե՞ս նրա մեջ քմահաճաբար կարող են առաջ գալ միտք, զգացմունք, գիտակցություն: Մի՞թե կարող է հեռագիրը ինքրուրույնաբար անկախորեն գործել, նա անպայման պահանջում է երկու խելացի գործիք, որոնցից մեկը հեռագիրը տալու, իսկ մյուս ընդունելու է: Այդ երկուսի միջև գոյություն ունեն մի շարք տարածվող շարժումներ, քիմիական միացումներ, որոնք իրենք իրենց կատարում են կուրորեն, անխուսափելիորեն, բայց այնուամենայնիվ այդ շարժումները պետք է ունենան սկիզբ և վերջ և թե՛ մեկի և թե՛ մյուսի համար անհրաժեշտ է բանական ուժ: Պատեցեք երկիրը հեռագրական ցանցով և ապարատներով ու եթե ոչ ոք նրանցով չօգտագործի, նոքա ոչ մի ծառայություն չեն կարող մատուցանել, և այնուամենայնիվ նրանց կազմող էլեմենտները ոչնչով չեն տարբերվում ուղեղային մասնիկներից:

Մի խորունկ ճշմարտություն է պարունակում իր մեջ Ժենի մի փիլիսոփայի հետևյալ խոսքերը. «Եթե գոյություն ունենար միմիայն նյութը, այս դեպքում մատերիալիզմը գոյություն ունենալ չէր կարող»:

Վերը ես խոսում էի երաժշտական գործիքի մասին, պարզ է, որ ջարդվելուց հետո նա չի արձակում նվագի ձայներ, նույնպես և անկարելի է պատկերացնել, որ գործիքը կնվագի ինքնաբերաբար: Նվագի համար անհրաժեշտ է փոքրիշատե հմուտ երաժիշտ, հակառակ դեպքում գործիքը լռության կլինի դատապարտված: Ուղեղը միայնակ նույնպես չի արտադրում ոչինչ, նա ստեղծագործում է որևէ բան, մտածում է, զգում է, տեսնում է միայն այն դեպքում, եթե կառավարում է բանավոր, զգայուն ու կամքով ներշնչված գոյությամբ, այսինքն՝ հոգով: Սակայն եթե իմ բոլոր հոգեկան գործունեությունը ուղեղային մասնիկների շարժման արդյունք է, թող բացատրեն ինձ՝ ին-

չո՞ւ ժամանակի ընթացքում ես մնում եմ նույն էակը, երբ հայտնի է, որ յոթը տարին մի անգամ, գուցե և ավելի հաճախ մեր մարմնի կազմությունը նորոգվում է և մենք ստանում ենք նոր մաշկ: Մեր մարմինը ներկայացնում է իրանից անընդունակ շրջանառություն, նորա մասնիկները շարունակ միանում են և բաժանվում, բնական է, որ նույն փոփոխությանց ենթարկվում են նաև ուղեղային մասնիկները: Հապա ինչպես ես մնում եմ նույնը, միշտ ճանաչելի բոլոր նրանց համար, որոնք գիտեն ինձ, տիպով, որոշ բարեմասնություններով և պակասություններով, նույն հատկություններով, որոնք ժամանակի ընթացքում ոչ միայն չեն անհետանում, այլ, ընդհակառակը, շատ հաճախ ուժեղանում են: Եթե իմ ես-ը լոկ շարժումն է ուղեղիս մասնիկների, թող ուրեմն ցույց տան ինձ այդ ես-ը կազմող մասնիկները: Նրանք շատ են, կասեք դուք, ինչո՞ւ ցուցադրել միայն մի քանիսը: Ուրեմն իմ ես-ը բաղկացած է անվերջ շատ փոքրիկ մասերից, հապա ուրեմն և նա բարդ է, բայց ես նկատում եմ հակառակը, ես ճանաչում եմ ինձ իբր մի ամբողջական էակ, ես ունեմ իմ միության գիտակցությունը, որը հասկանալի է այն դեպքում միայն, եթե կա նույնպես մի սկիզբ, որը իրանով լցնում է իմ ամբողջ կյանքս և կոչվում է հոգի: Սեփական ես-ի այդ մշտականությունը մասնիկային շրջանառության մեջ է բերել արդեն Կլոտ Բեռնարին այն համոզման, որ յուրաքանչյուր շնչող էակի վրա կա մի հրամայող, ղեկավարող ուժ: Այսպիսի ենթադրությունը զգալի չափով մեզ մոտեցնում է հոգու հիպոթեզին: Ոչ, ոչ, ինչ էլ որ ասեն, ինչ էլ որ ասեն, պետք է ընդունել, որ անցումը նյութականից դեպի անյութը, ֆիզիոլոժիկ երևույթներից դեպի հոգեկան երևույթները, տարածվող շարժումներից դեպի նրա գիտակցությունը, այսինքն վերջ ի վերջո մարմնից դեպի հոգին դեռևս մինչև այժմ ոչնչով լցվել հնարավոր չի եղել, եթե նույնիսկ խոսենք այնպիսի անաչառ մտածողների խոսքերով, որպիսիներն են Թենը, Տենդալը, Դյուրոա Ռայմոնդը: Ահա թե ինչպես են այդ գիտնականները արտահայտվում. «Մի շարժում, ասում է առաջինը, ինչպիսին և լինի նա, շրջանաձև, ալիքանման կամ որևէ այլ ձևի, երբեք չեն ընմանվում դառնության, դեղին գույնի, դարդի կամ վշտի: Մենք չենք կարող փոխանակել որևէ մեկը այդ հասկացողություններից մյուսի հետ: Անալիզը փոխանակ լցնելու նրանց բաժանող տարածությունը, թվում է, լայնացնում է անվերջությունը»: Ուղեղի ֆիզիկական գործունեությունից անցումը համապատասխան գիտակցական գործի անբացատրելի է,—ասում է երկրորդը,—այս երկու տեսակ երևույթների իրարից բաժանող անդունդը միշտ անբացատրելի ու անընմբռնելի է իրանց իմացականության համար»: Այն ժամանակ, ասում է երրորդը՝ «Երբ սկիզբն առավ կենդանական կյանքը երկրի վրա, և էակներից ամենահասարակը առաջին անգամ ճաշակեց բավականության կամ դառնության զգացմունքը, արդեն բացվեց անանցանելի անդունդը»:

Մենք շատը չենք պահանջում, մեզ կբավականացնե նաև խտրության, տարբերության խոսքը: Բայց վերցնենք անդունդ խոսքը, քանի որ գործ է ածվում որոշ գիտնականների կողմից, բայց ընթերցողները պետք է ընդունեն, որ երբ մի անանցանելի ու անմերձենալի անդունդ բաժանում է երկու բան, այդ բաները պետք է տարբեր լինեն: Սա մի ճշմարտություն է:

Այժմ մենք քննության ենթարկենք հոգու արտահայտության կամ գործունեության մի քանիսը: Այդ գործողությունները անթիվ են, բայց նրանց կարելի է բաժանել երեք դասակարգի. խելք, զգացմունք և կամք: Առաջ բերած դասակարգությունը կատարելություն չէ ներկայացնում իրանից, այնուամենայնիվ նա ամենքին հայտնի է, հարմար է ավելի և մեր կողմից ըն-

դունելի: Ես սկսում եմ խելքից. յուրաքանչյուր մարդ ունի խելք, բանականություն, որը նրան թույլ է տալիս դատելու և մտածելու: Անկասկած է, որ այդ բանականությունը հավասարապես տրված չի բոլոր մարդկանց: Ոմանք ունեն այնքան միայն, որ կարողանան կառավարել իրանց: Մտավոր վերելքի բարձր աստիճանին վրա կանգնած են (տաղանդավոր гениални) մարդիկ, որոնք կոչված են (չի կարդացվում) Աստուծո մտքերը և որոնք, շնորհիվ իրանց համառ հետախուզումների, գտնում են օրենքը անհատակ մեծի ու անվերջ փոքրի: Օրինակ ֆրանսիացի աստղագետ (астрономик) Լեզերիե յուր աշխատության ու թվական հաշիվներով ենթադրեց մի մոլորակի գոյությունը երկրից միլիոնավոր վերստեր հեռու միմիայն այն պատճառով, որ նա նկատել էր մինչ այդ ժամանակ անբացատրելի վրդովմունքներ մի այլ մոլորակի շարժման մեջ: Այդ մոլորակի տեղի այդ ենթադրություններից մի ամիս հետո Բեռլինում մի աստղագետ իր հեռադիտակը ուղղեց Լեզերիեի ուղղությամբ ու գտավ այդ մոլորակը: Հնարավոր էր, որ Լեզերիեի ուղեղի արկղի հետ շարժման մեջ եղած ֆոսֆորի, ազոտի ու ածխածնի մասնիկները կարողանային այդպիսի զարմանալի գյուտ անել: Որպիսի՞ հավատ պետք է ունենալ դեպի հրաշալին, որպեսզի ենթադրվեր: Եթե բոլորը վերագրենք ուղեղին, այդ դեպքում խելքի շատության հետ պետք է ընդունեինք նաև ուղեղի շատությունը: Ասում են, որ փղի և կետ ձկան ուղեղը մարդու ուղեղից շատ է, հապա ինչու նրանք գիտական ուսումնատության չենթարկեցին մարդուն: Մյուս կոմից ուղեղային զանգվածի գլխավոր բաղադրական մասը ֆոսֆորն է, բայց չէ որ այդ նրանից շատ կա նաև ձկան մսի մեջ:

Անցնում եմ զգացմունքին: Այստեղ ևս ես նկատում եմ անթիվ և անհամար երևույթներ: Ծարան զգացմունքները, որը սկսվում է շատ թե քիչ կոպիտ զգացողություններից (անգլերեն կամ ռուսերեն) ու բարձրանում է մինչ ամենավեհ և բարձր զգացմունքները, անվերջ է: Կույր և անգիտակցական սիրո հանդեպ դրվում են այնպիսի արտահայտություններ, որոնք շարժում են նույնիսկ անզգա մարդկանց: Որպիսի՞ աքանչելի փոփոխությանց է ենթարկվում օրինակ, մայրական ինստինկտը, երբ զարգանալով էակից դեպի մի այլը, նա դառնում է այն անկաշառ, խորունկ, Աստվածային սերը, որը հաղթահարում է ամեն անձնվիրություն, ամեն զոհողություն: Արդյո՞ք այս բոլորը կարող է լինել քիմիական միավորման և մասնիկային շարժումների արդյունք միայն, եթե այս բոլորը նյութի հետ կապենք: Ես չեմ հասկանում, ինչպես կարող էինք, օրինակ, մինչև արցունք հիանալ մենք մի մարդու հերոսական վարմունքով, որը մոռանում է իրեն և առանց մտածելու իրեն զոհ է բերում իր մերձավորին: Այսպիսի երևույթներ արտադրելու համար անհրաժեշտ է ունենալ ավելի բարձրը, քան շարժման դրության մեջ նյութի մասնիկները, հարկավոր է գործունյա սկզբունք, զգայուն հոգի:

Որպիսի՞ վեհության կարող է հասնել մարդը նույն այդ զգացմունքի շրջանում, դեպի գեղեցիկը արվեստի մեջ: Նկարչությունը, քանդակագործությունը, երաժշտությունը որպիսի հրաշալի աղբյուրներ (источники) են ներշնչման, որոնք կարող են տանել նրան երկրից հեռու ու բարձրացնել իրանից: Նա կարող է դորա միջոցով ստեղծագործել այն, ինչ լեզուն անկարող է արտահայտել: Եվ այս բոլորը պետք է լինի արդյո՞ւնք ատոմների քիմիական միացման, մասնակի շարժման, որոնք առանձին վերցրած միանգամայն անգիտակից և անգործունյա են:

Բայց այս բոլորը չէ, անհրաժեշտ է ասել մի քանի խոսք ևս կամքի մասին, որը ավելի ևս բնորոշում է մարդուն, քան բանականությունը կամ զգաց-

մունքը, որը կարծես կազմում է մարդկային էության հիմքը: Եթե մենք դիտենք էությանց շարանին, իրենց հանդես գալու սկզբնական մոմենտից, սկսելով առաջին տերևներից, մենք կնկատենք պրոգրեսիվ զարգացումն այդ ընդունակության: Կույր ու անգիտակից, սկզբում հասարակ այդ կենսական գործունեության նա հաջորդաբար կազմակերպվում է ու փոփոխվում՝ հետզհետե ավելի մոտենալով գիտակցական կամքի մի շարք աստիճանների միջոցով, մինչև որ վերջապես դառնում է մարդկային կամք, այսինքն՝ ուժ, որը օժտված է ազատությամբ ու գիտակցությամբ, և որ ինքը կարող է երևան գալ այս կամ այն ուղղությամբ, նամանավանդ ընտրություն անել բարու ու չարի մեջ:

Հաճախ առարկել են մարդու ազատության մասին, մինչև անգամ ուղղակի բացառել են այն, հաստատելով, որ մարդը սոսկ մեքենա է՝ կույր օրենքներին ենթակա, որոնցից ազատվելու հնարավորություն նա չունի: Բայց առողջ դատողությամբ յուրաքանչյուրը կընդունի այդ հաստատությունը առնվազն չափազանցություն, յուրաքանչյուրը կհամաձայնվի, որ եթե մեր ազատությունը սահմանափակված է (հաճախ մեր հանցանքով), այնուամենայնիվ նա իսկապես գոյություն ունի, և որ նա կարող է չափազանց ընդարձակվել, կամ նույն չափով սահմանավորվել և անգամ բոլորովին անհետանալ՝ նայելով, թե ինչպես մարդս օգտվում է նրանից: Հակառակ դեպքում անհասկանալի կլիներ, թե ինչո՞ւ մարդկային և Աստվածային արդարադատությունը դեռևս հանցավոր և պատասխանատու է համարում մարդուն, որը չարիք է գործում: Ինչո՞ւ դատարանները պատժում են մարդուն, որը դանակով հարվածում էր իր մերձավորին, և ոչ, վերքը հասցնող դանակին, քանի որ մարդը և դանակը մեկը մյուսից ավելի ազատ չեն:

Ոչնչացնել մարդու պատասխանատվությունը դժվար չէ, բայց այդպես վարվելով փակում են իրանց աչքերը ու չեն ուզում տեսնել բազմաթիվ դրական փաստեր և առաջանում են մի ավելի վտանգավոր ճանապարհով, ուր հասնելով մաքուր և ազնիվ մատերիալիստները՝ իրենք առաջինը տեղի տվեցին:

Հակառակ բոլոր նորագույն տեսությունների, մարդս իրեն զգում է պատասխանատու: Դա ներքին խորունկ համոզում է, որը նրանում դու չես կարող արմատախիլ անել շուտով, և որը անխուսափելիորեն ստիպում է ընդունել և նրա ազատությունը:

Բայց բոլոր այս երևույթների՝ կամքի, ազատության և պատասխանատվության խորքում գտնում ենք մի ուրիշը, որը եզրափակում, միացնում է նրանց՝ դա խիղճն է: Յուրաքանչյուր մարդ, նույնիսկ ամենագետը, ամենանվաստացվածը յուր ներսում զգում է այդ խորհրդավոր ձայները, որոնք լսվում են իր էության հեռավոր խորքերից՝ իրենից անկախ բարձր, բացարձակ, որը կոչվում է բարոյական խիղճ: Դա է, որ մարդուն տրամադրում է դեպ բարին, պահում նրան գայթակղվելուց, նա կշտամբում է, դատապարտում է, կամ հավանում է նրան՝ համապատասխան յուր վարմունքի, և որը կարող է կշտամբելով տանել նրան դեպ ամենաուժեղ բարոյական տանջանքներ, և հավանելով՝ դեպ անհերևակայելի ուրախության: Դա նա է, որ նշմարել է տալիս մարդուն դժոխային վիշտը կամ երկնային հիացմունքը: Մարդս կարող է երբեմն ստիպել նրան լռել մի առ ժամանակ, բայց հետո նա ստանձնում է իր անպայման բարձրագույն իշխանությունը, որպեսզի նրան տանջի ավելի ուժգնորեն, որքան երկար նա լռել էր: Բարոյական խիղճը կարող է ունենալ զարգացման բոլոր աստիճանները: Նա կարող է վատ

ուղղություն ստացած լինել, նույնիսկ այլասերված, բայց և այնպես՝ էապես նա այնուամենայնիվ մնում է որպես զգացմունք՝ բարձր պարտականություն, որին պետք է ենթարկվել կամ կորչել: Անշուշտ նրա ծագման բացատրության համար ասում էին՝ ժառանգականության, հակումների և շրջապատող հանգամանքների մասին, բայց ակնհայտ է, որ բոլոր այս ֆակտորները, որոնք կարող են ազդեցություն ունենալ բարոյական խղճի վրա, երբեք մեզ բան չեն ասում, թե որտեղից է նրա ծագումը: Այստեղ խնդիրը չի վերաբերում խղճի առարկայի, որը իհարկե կարող է փոփոխվել նայած հանգամանքներին, այլ իսկապես խղճի գոյության՝ այսինքն պարտականության զգացմունքի, որը նկատված է բոլոր մարդկանց՝ նույնիսկ վայրենիների մեջ:

Մի անգամ Ստենլիին հարցրին՝ ծանո՞թ է արդյոք այս զգացմունքը կենտրոնական Ամերիկայի կուսական անտառների թզուկներին, անշուշտ, պատասխանում է նշանավոր ճանապարհորդը. գործնականի մեջ նրանք ազատել են իրենք իրանց պարտականության օրենքից, բայց երբեք չեն ազատում իրանց մերձավորներին, որոնց նոքա համարում են միանգամայն պարտական այդ օրենքի:

Որպեսզի բացատրություն էլ տալու լինեն գիտակցության ծագմանը, մի շարժման մեջ գտնվող նյութ (մատերիա), որ նույնիսկ խնամքով հետազոտության ենթարկված լինելով հանդերձ մանրադիտակով կամ դանակով, երբեք չի կարող բացատրել մեզ սերտ կերպով իրար հետ կապված և ամեն մարդու մեջ գտնված այս չորս բանը. կամք, պատասխանատվություն, ազատություն, բարոյական խիղճ:

Ես ավելի երկար կանգ առա հոգու կարողություններից (հատկություններից) երրորդի՝ կամքի վրա, որովհետև նա ամենակարևորն է և որ գլխավորն է, այդ հատկությունն է, որ մարդուն անծայրորեն բարձրացնում է կենդանիներից:

Հոգին կարելի է բնորոշել որպես կամք՝ օժտված բանականությամբ, զգացմունքով և գիտակցությամբ: Եվ կամ որպես գիտակցող կամք, որ գիտե մտածել և զգալ, այս բնորոշումը բավական չէ, որպեսզի մենք կատարելապես հասկանանք, թե ինչ է հոգին, որը դեռ երկար ժամանակ, գուցեև ընդմիշտ կմնա գաղտնիք: Ավելի դյուրին է զգալ յուր հոգին, քան ապացուցել նրա գոյությունը, բայց այսպիսի բնորոշմամբ մենք մոտենում են ճշմարտությանը, քան եթե մենք բացասեինք նրա գոյությունը այն առարկությամբ, որ նրան շոշափել չենք կարող: Բոլոր դեպքերում էլ այդ բնորոշումը ուշադրության է առնում հոգեբանական երևույթները, որոնք բաժանված են ուրիշներից անանցանելի անդունդով:

Ես կարող էի հառաջ բերել այստեղ նաև շատ կոմպոնենտ (ձեռնհաս) մարդկանց վկայությունները, որոնք առանց տատանվելու հաստատում են հոգու գոյությունը նույն մտքով, ինչպես ես հայտարարեցի և արտահայտվեցի: Բայց գերադասելի եմ համարում կանգ առնել այստեղ՝ բավականանալով սրանով և վերջացնել ասածս երկու գործնական դիտողություններով:

Առաջին, կան մեծ թվով մարդիկ, հատկապես գիտնականներ, մատերիալիստներ թեորիայով, որոնք ապրում են ուղղակի հակառակ իրանց թեորիային: Նրանք ըստ ամենայնի ազնիվ են, բարոյական, անձնվեր և որոշ դեպքերում առանց տատանվելու կզոհաբերեին յուրյանց ամենաթանկագին շահերը, նույնիսկ իրանց մերձավորների բարյաց և երջանկության համար: Այսպիսով նրանք գործնականի մեջ ջախջախում են իրանց դավանած թեորիան, որովհետև նրանց մարմինը կազմող բջիջները, եթե նրանք լինեին ա-

ռանձնացած, երբեք չպիտի կարողանային հայտնաբերել այդպիսի կենցաղ (կյանք):

Երկրորդ. դիտողությունս վերաբերում է ընդհակառակն շատ քիչ ազնիվ հոծ բազմությանը, որոնք մատերիալիստներին (և գուցե ոչ մի հասկացողություն չունենալով թեորիետիկ մատերիալիզմի մասին) միմիայն անարգել կերպով՝ առանց կաշկանդանքների իրենց զգայական կրքերին հագուրդ տալու նպատակով, ստրուկ դառնալով իրանց վայելչություններին, վայելքներին, հաճույքներին, բերկրանքին, և նոքա ժխտում, ուրանում են հոգու գոյությունը՝ խլացնելով խղճի ձայնը միմիայն մի նպատակով. հետևելու մարմնական բնազդներին: Վտանգավոր խաղ, որի շնորհիվ նրանք վտանգում են ոչընչացնել այն, որը կազմում է միայն նրանց արժեքը՝ գիտակցությամբ նվիրագործված հոգին:

Գուցե նրանք սոքա կգերադասեն ասել Բյուխների հետ միասին (նորա գիրքը «ՈՒՅԺԸ ԵՎ ՆՅՈՒԹԸ») մարդկային ազատ, անմիտ (нилепость) խոսքի միայն տգիտություն չէ, այնքան անձնապաստան (մեծամիտ, высокомерный) լինել, որ խոսի ազատ տիրոջ ու խղճի մասին: Սերը, ատելությունը, սպանությունը, կեղծավորությունը, ոճրագործությունը,—սոքա բոլորը անհրաժեշտ հետևանքներ են ուղեղային որոշ կոմբինացիաների: Ամեն ինչ թույլատրելի է մարդու համար, այն բոլորը, ինչ գոհացնում է բնական հակումը, արագացնել նյութի վերականգնումը, առատորեն արտադրել ֆոսֆոր՝ լավ ուտելով ու խմելով: Այս է մեր կյանքի նպատակը, իսկ հետո՞յ: Պատասխանել աս հարցին անկարելի է: Համոզվենք գոնե, որ կյանքի մասին այսպիսի հասկացողություն ունենալը շատ քիչ մխիթարական է հասարակության համար: Գոհացնո՞ւմ է նա գոնե մեր բանականությունը, թողնում եմ ընթերցողներին իրենց այս մասին դատելու:

Հայաստանի Հանրապետության Պատմության Կենտրոնական Պետական Արխիվ (ՀՀՊԿՊԱ), «Կաթողիկոսական Դիվան», ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 2248, թերթ 1—9:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԵՑ
ՎԱՐՈՒԺԱՆ ՍՐԿ. ՏԵՐՏԵՐՅԱՆԸ